

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Ե Ր Ե Վ Ա Ն

№ 9

1969

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԽԱԶԵՐԻ ՄԻԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղության արվեստի պլխավոր տարրերի՝ հիմնախաղերի միակցության որոշումը մեծ ազերս ունի խաղանշանների վերծանության աշխատանքի ողջ ընթացքի հետ. այդ վերջինս էլ, իր հերթին, ուղղակի կախված է առաջինի դեմք նախնական լուծումից, ուստի և անխուսափելի է դառնում հենց դրանից սկսելը:

Մեր ազգյուրներն են հիմնախաղերի՝ միջնադարից եկող տախտակ-ցուցակները (խաղավոր գրչագրերի հետ իրենց ունեցած իրական հարաբերության մեջ), որոնք, ինչպես առիթ ենք ունեցել նշելու¹, բաժանվում են երեք խմբի՝ Ա, Բ և Գ:

Դրանցից առաջին երկուսի քննությունից և համեմատությունից արդեն պարզվել է², որ մենք գործ ունենք հիմնախաղերի՝ տարրեր ժամանակներում ու տարրեր միջավայրերում կազմված երկու տարրեր ցուցակների հետ, որոնցում առաջ բերված նշանները բոլորն էլ գործնականում կիրառված են բուն խաղավոր գրչագրերում, այն էլ խառն ձևով:

Դիտումները ցույց են տալիս, որ մեր միջնադարյան երաժշտական ձեռագրերում կիրառված մեկ այլ խումբ նշաններ են, այլ գասակարգության մեջ, առաջ են բերված Գ խմբի ցուցակներում և, որ առավել կարևորն է, Ա, Բ և Գ խմբերի ցուցակների տվյալները համադրելով, մենք ստանում ենք հայկական միջնադարի խաղավոր պլխավորագույն երգարաններում (շարական, խաղղիք, դանձարան, տաղարան) օգտագործված հիմնախաղերի գրեթե ողջ միակցությունը:

Նախ զբաղվենք մեր Գ խումբը գոյացնող տախտակ-ցուցակներով: «Անուանք եղանակաց ձայնից երգոց, զիւաից իմաստնոց» վերնագրի տակ դրանք հանդիսում են 1365 թվականին զաղափարված մի խաղգրքում³, 1671-ից առաջ կազմված մի ժողովածուի մեջ⁴, Գրիգոր Տաթևացու Քարազգրքի՝ XVII դարին վերաբերող մեկ ընդօրինակության մեջ (ավելի ճիշտ՝ Քարողգրքին հետևող Տոմարի մեջ)⁵, և զարձյալ՝ երուսաղեմի թանգարանի հայկական այն

1 Տե՛ս մեր հոդվածը՝ Խաղատուր երգումնեցին որպես միջնադարյան հայ երաժշտության ահապահ, «Էրաբեր հասարակական զիւաթյունների», 1966, № 11 (նաև՝ Ասկան վարդապետն ու խաղաղության արվեստը, «Էջմիածին», 1966, № 11—12):

2 Տե՛ս մեր հոդվածը՝ Հայկական խաղաղության հիմնական նշանների երկու ցուցակների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1:

3 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 8307, էջ 310ր—311ա:

4 Զեռ. № 605, էջ 47ր:

5 Զեռ. № 2063, էջ 356ր:

ձեռադրում, որից ժամանակին օգտվել է Ե. Տնտեսյանը⁶: Սրանք տարրերենք՝ համապատասխանաբար՝ «Հ», «Յ», «Ղ» և «Ճ» տառերով:

Պետք է ասել, որ հիմնախաղերի այս Գ խումբը, ըստ բոլոր տվյալների, պատմականորեն նախորդել է մեր Բ անվանածին, բայց մենք անհրաժեշտ համարեցինք Ա-ից հետո Հենց Բ-ն քննել, որովհետև նախ տվյալ երկու խաղախմբերը, ի տարրերություն Գ-ի, կազմված են միևնույն սկզբունքով, որով որանք հարաբերակցելու և համեմատելու աշխատանքներն ավելի հարթ ընթացք կստանային: Եվ հետո, Գ խմբի ցուցակները առհասարակ անհամեմատ ավելի են աղավաղված, քան մյուսները, չնայած դրանցից մեկը պահպանվել է նույնիսկ 1365 թվականը կրող գրչագրում: Հետեւքար պարզ է, որ նախապես նշումներով Ա և Բ խաղացուցակները, ավելի դյուրին կվերացվեին Գ խմբի տախուակների աղավաղումները:

Անցնելով այդ աշխատանքին, նախ պարզենք Գ խմբի խաղերի թվաքանակն ու անունները, մի բան, որն այնքան էլ հստակ չի երևում, որոնք առաջին հայացքից, ինչպես գա հաստատում է նաև քննարկվող ցուցակներին ընդհանրապես ծանոթ Ռ. Աթայանը⁷:

Մեզ գրադեցնող շորս ցուցակների վերջում նույնանման ձևով որոշակի մի տեղեկություն է հազորդվում գրանցում ընդորկված խաղերի թվաքանակի մասին, որին և վճռական օգնություն է ցույց տալիս խնդիրը լուծելիս: Այստեղ ասվում է, թե առաջ բերված հիմնախաղերը «են թուով ի՞ն» (23): Այս տեղեկությանը լրիվ համապատասխանում են «Յ» տախտակի տվյալները: Հիմք ընդունելով դա, կարող ենք հեշտությամբ վերացնել մյուս տախտակների անհարթությունները: Այսպես, համեմատելով, օրինակ, «Յ» տախտակը «Ղ»-ի հետ, տեսնում ենք, որ վերջինում պարզապես բաց է թողնված մի նշան՝ «վերադիր» կոչվածը: Այսուհետեւ, նույն «Ղ»-ի համեմատությամբ «Հ» տախտակում հանդիպում ենք Գ խմբի խաղերի շրջանակի համար մի ավելորդ անվան՝ «Ճնկներին», որի ավելորդ լինելը հասկացվում է նրանից, որ այստեղ գրան, կրկնողության կարգով, կցված է «խաղ» կոչված խաղի նշանը, մինչդեռ բուն «Ճնկների» նշանը ևս քիչ ստորև երևում է՝ «ողոմանեակ» անվան տակ: Իսկ «Ճ» տախտակում, բացի այն, որ նախորդի նման և նույն պայմաններում բերվում է «Ճնկները», վերջում բաց է թողնված «թագատրոպ» (կամ «թագատրոպոպ») անուն խաղը: Այսպիսով հաստատվում է, որ նշանների թվաքանակը իրոք 23 է: Գալով գրանց անուններին, հարկ է զիտել, որ եթե մի կողմ թողնենք մանր տարբնթերցվածները, ապա կրախվենք հետեւյալին: Չորս ցուցակներում էլ 12-րդ նշանի անունը թեև կարգացվում է «բեր», բայց սա թերագրություն է և պետք է լինի «ծոցը բեր»: Որովհետեւ Ա և Բ խաղախմբերի համեմատությունից արդեն զիտենք, որ «բերը» նույն «պարույկն» է⁸: Իսկ վերջինս քննարկվող Գ խաղախմբում իր նշանակությամբ յուրովի տարրալուծված է՝ «քաշին» (կամ «հրկարին») աղջակից՝ «ձայնդարձ» և «յարեշտ» կոչվող նշանների մեջ, ինչպես պիտի տեսնենք ստորև: Այսուհետեւ՝ 1-ին, 9-րդ և 10-րդ նշանների անունները տարբեր են «Հ» և «Յ» տախտակներում՝ մի կողմից (որտեղ կարգում ենք, համապատասխանաբար, «արաշեշտ», «հար» և «հարկոր-

6 Ե. Տնտեսյան, Աղդային երաժշտություն, «Սիռն», 1867, № 9, էջ 147 (տե՛ս այսուղեղ հրապարակված փաստորեն երկու խաղացուցակներից առաջինը, մինչև «շեշտ»-ը):

7 Ռ. Աթայան, Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 174—175.

8 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 73:

հայ») և «Յ» ու «Ղ» ցուցակներում՝ մյուս կողմից (որտեղ նույն նշանները կրում են «յարեշտ», «խածրեկ» ու «խածլէ» անվանակոչությունները): Սրանցից «յարեշտն» ու «արաշեշտը», որպիս անուններ, շատ մոտիկ են իրար, իսկ մյուսները՝ ոչ, բայց որովհետև վերաբերում են միևնույն նշաններին, պետք է (և շահեկան էլ է) դրանք ևս հաշվի առնել զույգ-զույգ: Եվ վերջապես պիտի նշել, որ Գ խմբի խազերի թվաքանակի որոշմամբ պարզվում է, թե երկու բառից կազմված «կուռ զրեհիկ» անվանակոչությունը վերաբերում է միևնույն Ե-րդ նշանին, որով վերանում է այս կապակցությամբ ժամանակին հարուցված կատկածն էլ⁹: Այստեղ նախ բերենք Գ խմբի խազերի ճշգրտված անվանացանկը:

1. Յարեշտ (կամ արաշեշտ), 2. քաշ, 3. ստորագիր, 4. վերադիր, 5. վանկ, 6. կուռ զրեհիկ, 7. խաղ, 8. դող, 9. խածրեկ (կամ հար), 10. խածլէ (կամ հարեկորճայ), 11. կորճայ, 12. ծոցքիր, 13. քազմեղանակ, 14. ողոմաննեակ, 15. հարուկ, 16. ձախնդարձ, 17. հանգոյց, 18. խունճ, 19. քմադարդ, 20. առանձնատրուկ, 21. քմատրուկ, 22. ծանրատրուկ, 23. թագատրուկ (կամ թագաւորատրուկ):

Ինչ վերաբերում է այս խազերի գծագրական ձևերին, ապա պիտի ասեմ, որ հատկապես դրանք են շատ աղավաղված: Սակայն, համեմատելով մեր շորս տախտակներն իրար հետ, և աշքի առաջ ունենալով բուն խազավոր ձեռագրերը, ինչպես և Ա. ու Բ խմբի ցուցակների արդեն ճշգրտված-համեմատված խազերը, որոնցում ընդունված նշաններից 15-ը նույն կամ տարրեր անուններով երեսում են ացատեղ էլ, հնարավոր է լինում առանց դժվարությունների սրբագրել սխալները:

Սկսենք այն խազերի նշաններից, որոնք շորս տախտակներում էլ բացարձակ սխալ են գծագրված: Դրանք երկուսն են՝ «ծոցքիրը» և «խունճը»: Բայց որովհետև դրանց հատակ ձևերը մենք արդեն ունենք Ա. և Բ խմբի ցուցակներում, վերջիններիս տվյալների հիման վրա էլ հենց վերացնում ենք սույն աղճատումները: Այսպիսի մոտեցման ճշտության մասին կարելի է դատել նաև նրանից, որ մեր շորս տախտակներում ըննարկվող սխալներն առաջացել են նույնանման ձևով: անհայտ գրիչները բոլոր դեպքերում շիտուն» անվանը կցիլ են «ծոցքիրի» նշանը, որովհետև վերջինիս նույնականացնելու համար կարող է այստեղ, իրեն հատուկ, բայց արդեն կրկնողության կարգով հանդես եկող նշանով: Տախտակներում առավել աղավաղված նշանների թվին են պատկանում նաև «ստորագիրի» ու «վերադիրի» գծագրաձևերը, որոնք այստեղ ընդունել են «քոթի» և կամ վերջինիս այլագրություններից որևէ մեկի ձևու:

Խազավոր գրչագրերի քննությունից պարզվում է, որ այդպիսի աղավաղումներ այս կամ այն շափով հատուկ են նաև դրանց, և նույնիսկ ընտիր ձեռագրերին: Բայց խազավոր երգարաններում, համենայն գեղս, հեշտությամբ տարրերում ենք տվյալ երկու խազերը հետևյալ պատճառով: «Ստորագիրը», որը մի փորբիկ ենթամնայի ձև ունի, գործնականում դրվում է տարրեր խազերի և խոսքի վանկերի տակից, որով խոկոյն առանձնանում է, ինչը անխնամ գծագրված լինի. իսկ «վերադիրը» խազարքերում երևա-

⁹ Ռ. Արայան, Խշկ. աշխ., էջ 174:

ցող մի ստոր նշան, գրության իր առանձնատուկ պայմաններն ունի, որով չի շփոթվում «բութի» հետ, ինչքան էլ աղավազվելով հիշեցնի այն:

Ասվածը պարզաբանելու համար բերենք հետեւյալ օրինակը, առանց խորանալու հարցի էության մեջ: Ավագ վանքում գաղափարված մի ընտիր խաղպարփի երդերից մեկում ողորմեա խոսքի «ը» ձայնավորի վրա դրված է երկու խաղ՝ «փուշ» և «վերապիր»¹⁰: Վերջինս նման է «բութին», բայց չի կարող այն լինել, որովհետեւ «փուշ»—«բութ» ընթացքը, երաժշտական մեկ նախադասության սահմաններում, այն էլ միևնույն վանկի վրա, բոլորունին հակառակ է խաղերի հաջորդականության հիմքում ընկած տրամարանությանը, ինչպես դա հայտնի է մեր երաժշտական ձեռագրերին ծանոթ գիտնականներին:

Կանգ պիտի առնել նաև «վանկ» և «հարուկ» խաղերի գծագրաձևերի վրա: Դրանք աղավազված չեն, բայց փոխադարձար խառնված են տախտակներում: «Հարուկ» անվան կից բերվում է նրա ճիշտ նշանը «Ճ» տախտակներում (որն, ի դեպ, նախկին ցուցակների «փուշին» է համապատասխան), այնինչ «Ղ»-ում և «Ճ»-ում այստեղ երեսում է «վանկի» գծագրաձևը: Իսկ «վանկ» անվան կից՝ միայն «Յ»-ում է հանդիպում նրա ճիշտ ձևը, մյուս տախտակներում այստեղ երեսում է «հարուկի» գծագրաձևը: Տվյալ զեպքում մեզ օգնության չեն կարող դալ խաղավոր ձեռագրերը (քանի ձևերի աղճատում չկա): Այնպես որ խնդիրը լուծենը՝ քննարկվող երկու խաղերից թեկուղ և մեկի անդահակոշության ու գծագրաձևի միջև գոյություն ունեցող կապը ապացուցելով: Նորատակահարմար է վերցնել «վանկը»:

«Վանկի» ճիշտ նշանը (որը հանդիպում է «Ճ» տախտակում հենց «վանկ» անվան կից, ինչպես և «Ղ» ու «Յ» տախտակներում՝ սխալմամբ՝ «Հարուկ» անվան կից), ունի համեմատաբար բարդ գծագրաձև, որն արդեն իսկ հուշում է, թե տվյալ խաղը նշանակել է ոչ թե սոսկ մեկ հնչյուն, այլ մեկից ավելի հնչյուններից կազմված մեղեղիական մի դարձվածքը: Սույն համոզումը ավելի ես ամրապնդվում է, երբ մտարերում ենք, թե սա այն խաղն է, որը հետազոտմ ստացել է «մենկորճ» անունը, որովհետեւ վերցինս մեր «վանկի» աղգակցությունն է բացահայտում երեք այլ խաղերի՝ «քենկորճի», «էկորճի» ու «ձակորճի» հետ, որոնք նույնպես բարդ գծագիր ունեցող են, հետեւաբար, մեղեղիական դարձվածքներ նշանակող խաղեր են: Արդ, իմանալի է, որ «վանկ» խոսքն էլ հնում նշանակել է ոչ միայն ձայն, հնչյուն և հնչողություն ընդհանրապես¹¹, այլև մեղեղի և նույնիսկ ուր ձայնի դրույամբ ընդգրկված ձայնեղանակ, ինչպես դա պարզ հասկացվում է մեր հին մատենադրության մեջ նրա դորձածության ձևերից ու հանգամանքներից: Այսպես, խիստ հատկորոշ մի քաստ է, օրինակ, որ Թովմա Արծրունին, պատմելով արար զորավար Բուղալի և Հարավային Արցախի իշխան Եսայի (Արու-Մուսեի) բանակների վերջին աշարկու բախման մասին, հաղորդում է, թե Սմբատ սպարապետի որդին՝ «տէր Մուշեղ», «հստէր անդ ի բացեալ ի վերայ բլրի միոց... և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ... և զի էր վարժեալ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանօթ էր ճարտասանական հրահանդիցն՝ եղ... զերզս՝ որոյ սկիզբն է՝ «Անզրազել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանզամ զալուստն»), և առն ի յուրեւորդ

¹⁰ Զեռ. № 755, էջ 20ա:

¹¹ Նոր բառզիրք Հայկագեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837 (տե՛ս վանգ կամ վանկ):

վանգէ»¹² (այսինքն՝ ութերորդ ձայնեղանակում, այն է՝ ԴԿ-ում: Բնդգծումը մերն է—Ն. Թ.): Եթե «վանկ» նշանակում էր նույնիսկ ամրողական ձայնեղանակ, ապա նա անկասկած կարող էր օգտագործվել նաև առհասարակ մեղեդիական հատվածի կամ դարձվածքի իմաստով, մանավանդ այն գեպքում, երբ վերաբերում էր մեկ, առանձին վերցրած խաղի: Այսպիսով պարզ է, որ «վանկի» անվանակոչությունն ու նրա գծագրական համեմատաբար բարդ ձևը աղերս ունեն միմյանց հետ:

Վերջապես շորս նշան ճիշտ են գծագրված միայն երկուական ցուցակում (բնդամենը շորս ցուցակի առկայության պայմաններում). «խաղը», «խածրեկը» (կամ «հարը») և «քմաղարդը»՝ «ՅՅ-ում» և «ՂՂ-ում». ու «առանձնատրություն» «ՃՃ-ում» և «ՇՇ-ում» (թեև այստեղ փոքր ինչ թերագրված ձեռվ): Բայց որովհետեւ այս խաղերի նշանները տարբեր անունների տակ կան նաև Ա և Բ խմբի տախտակներում, հեշտությամբ ենք կողմնորոշվում: Մեկ որիշ նշան՝ «Ճայնդարձը», որ շկա Ա և Բ խմբի խաղերի շարքում, միանման է գծագրված դարձյալ երկու տախտակում միայն՝ «ՃՃ ու ՇՇ» (խաղի տակից դրվող «կ» տառի հետ միասին, որը որպես օժանդակ նշան, ավելորդ է այստեղ): Բայց այն՝ «ՅՅ-ում» ևս առկա լինելով «վանկի» հետ միակցված ձեռվ, բավականաշատ որոշակի երեակում է իր գծագրաձեր, որ հանդիպում է նաև խաղավոր գրշագրերում: Մնացած խաղերի մեջ շկա մեկը, որ ճիշտ գծագրված չլինի շորս տախտակներից գոնե երերի մեջ (եթե հաշվի շատնենք կետերի շնորհիլ երբեմն առաջացող ավելացրությունները):

Հարկ է հատկապես նշել, թե քննարկվող բոլոր տախտակների վերջում (բացի այն, որ նրանցում բնդգրկված նշանների թվաքանակի մասին բերդվում է մեղ արդեն հայտնի տեղեկությունը), արվում է մի շահեկան դիտողություն ևս, բայց որի՝ առաջ բերված խաղերից «հեթն... զլիսաւորք են ըստ եւթն եղանակաւոր զըրոյն... և այլդ խառնուրդք են, որպէս զանազան անուշահոտ համեմք համադամ կերպաց»: Հիշյալ յոթը գրերն են՝ հայոց լեզվի ա, ե, է, ր, ի, ո և ։ ձայնավորները, որոնց և համապատասխանեցված են մեկական խաղանշան: Վերջիններիս մասին մեր շորս ցուցակները թեև կատարելապես համաձայն չեն, բայց այստեղ դա չէ կարևորը: Վերորերյալ տեղեկությունը նախ և առաջ քննելի է բոլորովին տարրեր մի տեսանկյունից՝ ձայնավորների մասին հայկական միջնադարյան ուսմունքի լույսի տակ: Խոկ որ հայերը նույնպես միջնադարում մշակած են եղել ձայնավորների մասին մի ուսմունք, կապված երգեցողության հետ, դա վկայում են թեկուզ և եփրեմ երաժիշտ վարդապետի (XVII դ.) հետեւյալ խոսքերը, ոտանավորով դրված իր մի հիշատակարանում:

«Եփրեմ ուարրիդ ողկոյզարեր,
որ երաժիշտ ես անուաներ:
Քաղցրանուագ ալեօքրդ ձեր,
Երդեա անուշ մեղեղիքներ:
Զմանկունս ուսոյ տաղ և զանձեր,
Նոքա երգեն, զուարթ դու լեր:
Ներհրմտացեալքն մեղեղիքներ,
և այլ ուսմունք ձայնաւորներ»¹³:

12 Թովմայի վարդապետի Արծունոյ Պատմութիւն տանն Արծունեց, Թիֆլիս, 1917, էջ 297—298:

13 Զեռ. № 7717 (Տաղարան), էջ 258ը (բնդգծումը մերն է—Ն. Թ.):

Այժմ կարող ենք ծանոթանալ դ խմբի խաղերի համեմատված և ճշգրտված տախտակ-ցուցակին (գծ. I):

Այս տախտակի մասին խոսելուց առաջ անհրաժեշտ է փոքր ինչ կանգ տոնել նրա խաղերից մի քանիսի վրա: Դրանք են «ստորադիրն» ու «վերադիրը», «յարեշտը» (կամ «արաշեշտը»), «քաշը» և «ձայնդարձը»:

Առաջին հայացքից կարող է անհասկանալի թվալ, թե ինչու այստեղ «ստորադիրը» և «վերադիրը» զամփում են հիմնախաղերի շարքը: Երաժշտական ձեռագրերի բննությունը ցույց է տալիս, սակայն, որ հիշյալ երկու նշաններն իրոք կարեոր դեր են խաղացել խաղադրություններում: Երկուսն էլ հանդիպում են շարակնոցներում ևս, բայց առավել առատ օգտագործված են խաղպիքերում: «Ստորադիրը» կապող նշանակություն ունի և համապատասխանում է մեր ժամանակակից նոտագրության ligament: Նրա օգնությամբ կապվում են (legato են կատարվում), ինչպես նույն վանկի վրա դրվող իրար կից տարրեր խաղեր¹⁴, այնպես էլ մեկ խաղով նշանակվող մի խումբ տարրեր բարձրության ձայներ, երբ այն գրվում է մեկ, առանձին վերցրած խաղի տակից¹⁵:

ԳԸ. I

Յարեշտ /կամ արաշեշտ/ . քաշ . ստորադիր . վերադիր .

Վ վանկ . կուռ զրեհիկ . խաղ . դող . խաճբեկ /կամ հար/ .

Հաճլէ /կամ հարկորճայ/ . կորճայ . ծոցբեր . բազմե-

ղանակ . ողոմանեակ . հարուկ . ձայնդարձ . հանգոյց .

Խունճ . քմազարդ . առանձնատրոպ . քմատրոպ . ծանրա-

տրոպ . թագատրոպ /կամ թագաւորատրոպ/ .

Այս վերջին կետի կապակցությամբ հարկ է երկու խոսք ասել հատկապես «երկարի» տակից դրվող «ստորադիրի» մասին: Հայտնի է, որ հայկական խաղադրություններում «երկար» խաղով նշանակվում է մետրական երկու միավորի արժեքով վանկը, որը կարող էր հնչյունավորվել հենց մեկ երկար ձայնով: Բայց քիչ շեն գեղքերը, երբ «երկարով» խաղադրված վանկը, պահելով մետրական երկու միավորի իր արժեքը, հնչյունավորվել է տարրեր բարձրության մեկից ավելի ձայներով: Եվ ահա այս հանգամանքը պարզելուն կարևոր օժանդակություն է բերում «ստորադիրը» (հոգ չէ, թե ձայների կապված կատարման սահմաններում), որովհետեւ նրա ներկայությունն իսկ արդեն խոսում է տարրեր բարձրության մեկից ավելի ձայների առկայության մասին. այլապես «երկարի» տակից այն գրելը բոլորովին անիմաստ կլիներ: Երաժը-

¹⁴ Զեռ. № 755, էջ 4ա (տե՛ս «Յիշեցուը» խոսքի առաջին վանկը):

¹⁵ Նույն տեղում. տե՛ս «ի զիշերի» խոսքի «ի» նախդիրի խազը, էջ 20ա, «ողորմեա» խոսքի առաջին վանկը և այլն:

տական ձեռագրերի ուշադիր զննության միջոցով կռահվում է նաև «վերադիրի» նշանակությունը, որ զատող, անջատող պաշտոն ունի: Պիտի նշել, որ խաղարություններում «վերադիրի» նշանակալից դերը լրիվ բացահայտելու համար, անհրաժեշտ է նախադիս պարզել վերև հիշատակված՝ ձայնավորների մասին հայկական միջնադարյան ուսմունքի էությունը, սակայն առ այժմ չանդրադառնալով դրան՝ գեթ այն կարող ենք ասել, որ քննարկվող խաղը կարեոր ցուցումներ է ավել երաժիշտներին երգեցողության ընթացքում մեղեղիական նախադասությունների (ֆրազների) առավել արտահայտիչ մասերն առանձնացնելու (ֆրազնական կոչվածքը կատարելու), ըստ այդմ շնչառությունը կանոնավորելու և այլ տեսակետներից: Նախընթացից թեև պարզ պետք է լինի արդեն, թե ինչու վերը բերված տախտակում քննարկվող երկու խաղերը առաջ են քաշվում որպիս հիմնական նշաններ (շնորհած, խստորեն դատելով, դրանք այդպիսին կարող են և չհամարվել). բայց մենք չենք կարող չհիշատակել նաև այն փաստը, որ Կոմիտասը նույնպես հայկական խաղարանության ընդամենը տասնմեկ «տարրերը» ամփոփող իր տախտակում ժամարի տակ առանձնացրել է «կապող և զատող խաղերը»¹⁶, որոնք, մեր համոզմամբ, ուրիշ բան չեն կարող լինել, քան եթե նույն «ստորադիրն» ու «վերադիրը»:

Այնուհետև, ինչպես երեսում է մեր ճշգրտած տախտակից, «յարեշտը» (կամ «արաշեշտը»), «քաշը» և «ձայնդարձը» իրենց դժագրական ձեւերով շատ մոտիկ են իրար: «Յարեշտն» ունի թեթևակի ալիքավորված «երկարի» ձեր. «Քաշի» տարրերությունը սրանից մեկ կետի հաշվին է միայն. իսկ «ձայնդարձն» ավելի խոր ալիքավորված մի «երկար» է պարզապես: Սույն երեք նշաններից բուն «երկարին» համապատասխանողը «քաշն» է, որին այստեղ մի կետ է ավելացված՝ այն «յարեշտից» տարրերելու համար անկասկած: Բայց մյուս երկու խաղերը ևս այս կամ այն ձեռով ու շափով առնչվում են «երկարի» հետ: Խնդիրը նրանումն է, որ, ինչպես ցույց են տալիս երաժշտական ձեռագրերում «երկարի» գործածության հանգստանքները (դրանցից մեկն է, օրինակ, «ստորադիրի» հետ միասին հանդեմ զալու վերը նշված պարագան), նրանով նշանակված ձայն-հղանակային իրողությունները մեկից ամենի են եղել¹⁷, թեև վերջիններս տարանջատենելու մի ձգուում էլ գոյություն ունեցել է միշտ:

16 Կոմիտաս, Շարականի խաղերի նշանակությունը («Հոգվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941, էջ 167):

17 Ի դեպ, խիստ հատկանշական է, որ Կոմիտասի կատարած խաղարանական ուսանելի փորձերում «երկար» անվան կցված են մի զեպքում մեկ, և մի այլ զեպքում՝ հինգ նշաններ: «ձայնդարձի» նշանը բերված է «Հարց» պայմանական անվանակոչությամբ. և դարձյալ՝ բաշտ (հոգնակիով բերված) անվան կցված են, մի անգամ՝ երեք, ու մի երկրորդ անգամ էլ՝ շորս նշաններ, որոնց տարրերությունները որոշակիորեն զուրս են զալիս սոսկ ալլագրությունների սահմաններից (ան' ո Զարևնցի անվան գրականության և արգեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, խաղարանական նյութեր, № 662, թերթ 34 և 35): Այնուհետև, զեռ Կոմիտասից էլ առաջ, Խղնութիւնու Կյուրեղյանը, որը խաղավոր Ժամանակակից և Շարականի հրատարակության առթիվ բավականին քան է արել երաժշտական համապատասխան ձեռագրերն ուսումնասիրելու ուղղությամբ, «Հետեւով ճշգրիտ համեմատութեան հնագումիցն ընտիր ձեռագրաց և Հեթմայ թ արքայի շարականին մանաւանդ, որ թերեւ քնաւից ընտրելագոյնն է», աշխատության նախակցած «Զեկուցման» վերջում զիխավոր խաղերի մի տախտակ է առաջ բերում (հիմք վերցնելով Ա խմբի խաղերի թվարանակն ու կարգավորությունը), որտեղ «երկար» անվանը կցված 14 նշաններից մի քանիսը (շնչարձելով այստեղ սխալմամբ դժագրված «խոսրովայինի» նշանը), նույնպես զուրս են զալիս սովորական ալլագրությունների սահմաններից (ան' Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեաց եկեղեցւոյ, Վենետիկ, 1898, էջ ին և լին), վերջապես ուշագրավ փաստ է:

Նախ խոսենք «Ճայնդարձի» մասին: «Ճայնդարձը» մի կողմից սերտ աշուրս է ունեցել «Երկարի» հետ և նույնիսկ խառնվել է նրան, ինչպես կտեսնենք ստորեւ. մյուս կողմից, սուկայն, տարբերվել է «Երկարից» նրանով, որ զերծինիս բովանդակությունը ընդգրկելով, միևնույն ժամանակ «ինչ-որ բան» ավել է նշանակել (ասենք՝ «Երկար» + յ, որն և հետագայում, ավելի տարանցաւ մոտեցման ուայմաններում, կոնկրետացվել է, նայած տեղին, երաժշտական կոնտեքստին): Նշված երկու կետերի մասին էլ մեզ գաղափար է տալիս հետեւյալ փաստը: Էջմիածնում 1679 թվականին դադափարված, բայց խաղաղրության արվեստի զեռևս ոչ լրիվ բյուրեղացած վիճակն արտացոլող մի շարակնոցում, առատորեն օգտագործված ենք տեսնում «Ճայնդարձ», այն էլ այնպիսի ընդգծված դժագրական ձևով, որ, առաջին հայացքից, շփոթվում է անգամ «Խոսրովայշնի» հետ¹⁸: Համեմատելով տվյալ զրշագիրը XVI դարում օրինակված ավելի բնափիր մի շարակնոցի հետ, տեսնում ենք, որ առաջինի «Ճայնդարձները» այստեղ գրեթե միշտ համբնկնում են «Երկարին»¹⁹: Էջմիածնի հիշյալ զրշագրի այս համատարած «Ճայնդարձ» = «Երկարների» մեջ սակայն, թաքնված են բուն «Ճայնդարձները» ևս, որոնք և մեր ընտիր շարակնոցում փոխարինվում են «պարոյկով», կամ «խաղով» և կամ մեկ ուրիշ խաղով, որը, «Երկարի» բովանդակությունն ընդգրկելով հանդերձ, մի հավելյալ նշանակություն էլ ունի²⁰:

Ինչ վերաբերում է «յարեշտին» կամ «արաշեշտին», ապա պիտի ասել, թե այն իրենից ներկայացնում է «Երկարի» գործածության հին ու նույնիսկ առողանական ձևերի մնացորդներից մեկը և, որպես այդպիսին, սերտ առընթեթյուններ ունի մի կողմից «շեշտի» և մյուս կողմից դարձյալ «պարոյկի» հետ: Առ այս կարող ենք վկայակոչել հետեւյալ փաստերը: Քննվող խաղի անունն իսկ, մանավանդ նրա երկրորդ, ավելի ճիշտ ձեռ՝ «արաշեշտ» (որ և յարշեշտ), վերցված է մեր հին քերականությունների «Յաղագս առողանութեանց» բաժնից, բայց որում մի ժամանակ, երբ զեռևս լրիվ դիտակցված չեն եղել՝ «յարաշեշտովոր», «նախայարաշեշտովոր», «յարապարոյկ»²¹ և նման տիտի ոլորակների՝ բացառապես հին հունարենին կապված լինելը: Այսուհետեւ, դիտելի է, որ մեր միջնադարյան հեղինակները նույնողեն, հույն քերականների հետևողությամբ, աշխատել են հատուկ կերպով հարաբերակցել առողանության «ամանակի» նշանները «ոլորակի» նշանների հետ, և բայց այդմ, բնա-

և այն, որ XIII դարի Կիլիկյան նշանավոր զիտնական, զրության արվեստի հմտության Արխատակեն զրիշը, խոսելով ընթերցանությունը և մանավանդ վերծանությունը դյուրացնող կետադրության մասին, «քաշը» հիշատակում է «զքաշ» հողնակի ձևով, թեև սրան կցված է լոկ մեկ զծագրաձեւ, որից և պարզ է, թե վերշինս ավելացված է հետագայում, պատահական մի զրչի ձեռքով (տե՛ս «Երեւածութիւնը բացերեալիս բազմազան բառից և բայից յոզնախումբ շարագրութեամբ արարեալ զատ Ասիստակիսի զրչի ի խնդրոյ բազմաց յարշեստ զրշութեան», Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 161ա—161բ):

¹⁸ Զեռ. № 5161:

¹⁹ Զեռ. № 8542:

²⁰ Հմմտ. «Տեսոն ընդ առաջին կանոնի «Օրհնութեան» երկրորդ պատկերը՝ Դ2, «Այսաւը անըսկը զրնական ծընունդ»: ձեռ. № 5161, էջ 24ա, և ձեռ. № 8542, էջ 4բ:

²¹ Արուեստ Դիոնիսոս Քերականի (տե՛ս Հ. Ածոն, Դիոնիսий Փրակիական և արմանական տոլկության պատմությունը, Պետրոգրադ, 1915, էջ 38—39):

կանաբար, համապատասխանություն տեսել «երկարի» ու «պարոյկի» միջեւ։ Մեր քերականներից ոմանք «պարոյկի» մասին խոսելիս նույնիսկ բավարարվի են՝ նրա «երկարացնող» զորությունը նշելով միայն²²։ Անկախ այս բոլորից մեռ Աբայանը ցույց է տալիս, թե հնում, Հայկական առողանության մեջ «երկարը» գործ է ածված նաև «շեշտի» և մանավանդ «պարոյկի» փոխարեն²³։ Իսկ այն մասին, որ մեր բուն խազագրության մեջ ևս հաշվի են առնված եղել «երկարի» և մասնավորապես «պարոյկի» առնշությունները, մենք իմանում ենք ձեռագրական մի բնորոշ հատվածից, որին կծանոթանանք քիչ ստորև։

Այժմ Գ խմբի խազերի տախտակը կարող ենք զննել իր ամբողջության մեջ։ Նախընթացից արդեն պարզ է, որ Հիմնախազերի Գ խումբը ևս ինչ-որ կապեր ունի առողանության նշանների հետ։ Ակներե է, սակայն, որ այդ կապերը թույլ են։ Խոկույն աշքի է զարնում, օրինակ, որ այստեղ չկա առողանության նշանների այն կոմպլեքսը («շեշտ»—«բութ»—«պարոյկ»—«սուղ»—«երկար»), որը ժամանակին ընդգրկված է եղել երաժշտախազերի զրությամբ։ Եվ սա զլխավոր առանձնահատկություններից մեկն է, որով Հիմնախազերի Գ խումբը տարբերվում է և՛ Ա-ից և՛ Բ-ից։ Բայց այն ավելի հեռու է հատկապես Ա-ից (որում արտացոլված է խազագրության արվեստի զարգացման ավելի հին մի շրջանը, կապված, ամենայն հավանականությամբ, բուն Հայաստանի երաժշտական կյանքին)։ և ընդհակառակը, ընդհանուր առմամբ մոտենում է Բ-ին, ինչպես իր խազերի ճոխությամբ, այնպես էլ նրանց (խազերի) երրեմն սղրական տարրերակներից ու երրեմն էլ «բարբառային ձևերից» տպագրությունն ստեղծող յուրօրինակ անվանակոչություններով։

Ըստ բոլոր տվյալների, Գ խմբի Հիմնախազերի տախտակը նույնպես (Բ-ի նման) կազմվել է Կիլիկիայում։ Պատմական կարեոր մեկ տվյալի լույսի տակ այն մասին, թե Կիլիկիայում մի ժամանակ հատկապես զբաղվել են առողանության նշանները երաժշտախազերի զրության մեջ ներմուծելու խնդրով, կարող ենք ասել նաև, թե մեր Գ տախտակը ստեղծվել է Բ-ից առաջ, և վերջինիս նման եղել է գործնական խազագրության զարգացման փուլերից մեկի ցուցիչը։ Խոսքը վերաբերում է Առաքել Սյունեցու հազորդած հետևյալ տեղեկությանը, որի վրա առաջին անգամ լուրջ ուշագրություն է դարձրել Ղ. Ալիշանց։ «Քերեալ, զտեալ և ճշմարիտ... բանք երգոցն... Խլկալ օրինակն է ի Շարակնոցն, — զրում է Սյունեցին, — զոր մեծ վարդապետն ուղղեաց. այն որ զնսայի նախասացն մեկնեաց ի խնդրոյ Հեթում թագաւորին ի Սիս... զի արհեստն առողանութեան՝ խաննեալ լիցի շերգոն, որ զիսորհուրդ բանին յայտնէ. որպէս նոյն Խլկոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ»²⁴։ Այստեղ նույն կոչված երաժիշտը՝ Կիլիկյան ժամանակագրի խոսքերով ասած՝ XII

22 Յառողանութիւնսն սպատառիկս, զոր զտի։ Տե՛ս անդ, էջ 40 («Բութն ոչ և խոկազեւ բուրակ, այլ փազառնական, զի երկու ամանակը են՝ երկար, սուղ. երկարն պարոյկ ոլորակ է... խոկ ի վերայ սուղ վանդիցն շեշտ դիցեն»)։

23 Մովսիսի Քերեղողի Մեկնութիւն Քերականին։ Տե՛ս անդ, էջ 178 («Առողանութիւնը են տասն ժողովեաց զամենայն սահման կարդացողութեան. շեշտ՝ վերացման ձայն, բութ՝ հարթ, որ ոչ ի վեր և ոչ ի վայր. պարոյկ, որ երկարացուցանէ զմէշ տանն»)։

24 Ռ. Աբայան, Հայկական խազային նոտագրությունը, էջ 26—27։

25 Գիրք Սահմանաց սրբոյն Գաւթի անյաղթ փիլիսոփայի և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հռգեշտաց մեկնութեամբ։ Տեսն Առաքելի եռամեծ վարդապետի, Մադրաս, 1797, էջ 523—524։

րարի «պատուական վարժապետն և երաժիշտն և առաջին քարտուղարն Ասոյ Գրիգոր» Խուլն է, որ «երարծ զաւելորդն, և զպակասն լցոյց զՆարականին». որ նոյն օրինակըն կոչին Խլկցի, զոր ստուգեալ է նորա, և են Սառւ բուն կոչեցեալ»²⁶. Իսկ «մեծ վարդապետ Գէորգը» ոչ այլ ոք է, քան «ստուգասէր» և «շափագիտակ» Գևորգ Սկեռացին, ինչպես բացատրում է Ղ. Ալիշանը²⁷, ակենարեար ելնելով այն փաստից, որ Հեթում Բ թագավորի հանձնարարությամբ «Մեկնութիւն Եսայիհայ» աշխատությունը գրողը հենց նա է եղել²⁸: Ղ. Ալիշանը սլարդաբանման կարգով նաև դրում է, թե «որպէս գուշակի Խուլն զեղանակն ձգրտեաց, իսկ Գէորգ զբանսն և զեղանակն»²⁹: Ալիշի քան հավանական է: Արովհետեւ Սկեռացու գործունեության շրջանումն է, որ կիլիկյան երգարաններն ստանում են իրենց ավարտուն տեսքը թե՛ զբական և թե՛ երաժշտական առումով: Միայն ընդզծել հարկ է, որ, ինչպես Հետևում է Առաքել Սյունեցու վերաբերյալ խոսքերից, Գևորգ Սկեռացու կատարած աշխատանքի սլաքը ուղղված է եղել հիմնականում մեկ նպատակի՝ խազավոր երգարաններում առողանության նշանների կիրառության սահմաններն ընդլայնելուն և դրան (կիրառությանը) հետևողական ու վերջնականապես օրինականացված բնույթ տալուն: Այսպիս ենք հարցը զնում, որովհետեւ, բացի այն, որ հիմնախազերի Ա. խմբի համակարգում արդեն իսկ հանդիպում ենք առողանության նշաններին, զատելով ինչպես Ռ. Արայանի օգտագործած խազավոր պատափիկներից³⁰, այնպես էլ Մատենադարանի № 9838 գրչագրում³¹ պահպանված, XII դարին վերաբերող խազավոր շարակնոցի շատ մասերից, առողանության նշանները խազագրության մեջ կիրառվել են Գևորգ Սկեռացուց էլ առաջ, միայն՝ ընավ ոչ այն շափով ու այն հետևողականությամբ, ինչ շափով որ դա արված է՝ սկսած Սկեռացու գործունեության ժամանակներից: Բնորոշ է, հենց վերջին տեսակետից, որ նշված ժամանակաշրջանում գաղափարված շարակնոցները, վերեւում քիչ տուաշ հիշատակված XII դարի երգարանի համեմատությամբ, օրինակ, շատ ավելի խիտ մի խազագրություն ունեն, և որ այդ խառնությունը շատ դեպքերում ծեսք է բերված առավելապես առողանության նշանների հաշվին: Այսպիս ուրիմն, Գևորգ Սկեռացին, բատ երեսոյթին, XIII դարի վերջին քառորդում, հատուկ զրադիվելով իրենից առաջ Գրիգոր Խուլի կողմից արդեն խմբագրված շարակնոցով (և, ամենայն հավանականությամբ, ոչ միայն շարակնոցով): Պործնականում մշակում է մասնավորապես առողանության նշանների երաժշտական կիրառման սկզբունքները, և դրանով մի նոր մակարդակի բարձրացնում երգարանների խազավորման արվեստը առնասարակ:

26 Ղ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 517.

27 Անգ, էջ 105:

28 Հ. Անայիան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Գ, Երևան, 1946, էջ 71 «Հեթում Բ թագավոր Կիլիկիոյ»:

29 Ղ. Ալիշան, Խջլ. աշխ., էջ 106:

30 Ռ. Արայան, նշվ. աշխ., էջ 45—63:

31 Զեռագիրը (որի վրա առաջին անգամ ուշադրություն է Հրավիրել Ա. Մեացականյանը, անց ու «Բանքեր Մատենադարանի», № 7, էջ 131), ժողովածու է՝ Շարակնոց—Տոնացոյց—Մահրուսունը բովանդակությամբ: Այն սկզբնապես գաղափարվել է 1193 թվականին Երուսաղեմում, և խիստ քայլայվելուց հետո նորագլել 1526-ին՝ Ս. Խաչիկ Հոր անապատում: Նորոգողը, սակայն, օգտագործել է հին ձեռագրի շատ թերթեր: Այստեղ հին Շարակնոցի մասերն են՝ էջ 9ա—10բ, 14ա—61բ և 69ա—117ա:

Խաղագրության արվեստի զարգացման հենց այս աստիճանն է, որ իր պլիամբորագույն գծերի մեջ արտացոլված է հիմնախաղերի մեր Բ կոշած տախտակում: Եվ ահա թե ինչու վերջինիս «Հաստատիչը» շէր կարող եղած լինել ներսես Շնորհալին, ինչպես հավաստիացնում է եփրեմ երաժիշտ Վարդապետը³²: Բայց, եթե ներսես Շնորհալին իրոք «Հաստատիչն» է հիմնախաղերի որևէ միակցության, իսկ դա խիստ հավանական է (նշենք, որ Ռ. Աթայանն էլ, ըստ երեսութին հաշվի առնելով Եփրեմ վարդապետի կարծիքը ևս, ենթադրում է, թե «Շնորհալու կողմից ձեռնարկված հոգեոր երաժշտության կարգավորումը, որի մասին խոսում են նրա կենսագիրները, ընդորկել է նաև երաժշտական խաղերի սիստեմը»³³), ապա դա անկասկած եղած պիտի լիներ Գ խմբի խաղերի միակցությունը: Այսպես թե այնպիս, պարզ է մի բան. հիմնախաղերի Գ տախտակը կազմվել է Բ-ից շատ առաջ, մոտավորապես XII դարի երկրորդ կեսին: Անհրաժեշտ է ընդունել, որ սա այն ժամանակաշրջանն է, երբ Կիլիկիայում օպերակում էր մանրուսման հատուկ խաղագրությունը ևս, որովհետև տվյալ հանդամանքը որոշակի հարաբերություն ունի Գ տախտակի կազմության հիմքում ընկած սկզբունքին: Արդարեն, համեմատությունը ցույց է տալիս, թե Գ տախտակի ստեղծման հիմնական նպատակը եղել է՝ ի մի բերել երաժշտական ձեռագրերում և ավելի առատորեն խաղգրքերում կիրառվող «արուեստաւոր» կոչված խաղերը, որոնք այդպես են կոչվել ի հակառակություն հենց առողջանության նշանների: Այն մասին, թե անցյալում իրոք ձգտում է եղել տարրերելու առողջանության նշանները («շեշտ»—«բութ»—«պարոյկ»—«երկար»—«սուզ»)՝ «արուեստաւոր» խաղերից, իմանում ենք երաժշտագիտական գրչագիր մի աշխատության շահեկան մի հատվածից, որը թեպետ պահպանված է մասամբ XV և մասամբ XVI դարում գաղափարված ժողովածուներից մեկում, բայց շատ ավելի հնուց է զալիս, և դարձյալ՝ Կիլիկիայից կամ նրա հետ սերտ կապ մի ուրիշ վայրից, զատելով թեկուզ և ուղղագրությունից:

Հատվածն ուղղակի մեջբերելուց առաջ, սակայն, նշենք հետեւյալ շորս կետերը: Նրանում, «ծնկների» գծագրածեն աղավաղվելով, վերածվել է «բարձրահարերին», որ ուղղել ենք. «շերեվ» (իմա՝ «խունճ») անվան կցված երկրորդ նշանը «բենկորճի» և «խունճի» հարակցումը լինելով, հիշյալ անվան դիմաց տոնվազն ավելորդ է, որ և ջնջել ենք. Խիստ կասկածելի են՝ «վանկի» ու «բարձրահարերի» հարակցման վերագրված «դայկուունայ», և «խոսրովայինի» գծագրածերից մեկին (որ բնավ դրածել չէ) հատկացված «դուր» անվանակոչումները, բայց հարմաք շղատելով դրանք փոխարինել այլ անուններով, թողել ենք. Հատվածս ունի նաև առանձնահատկություններ, ինչպես՝ «բութից», որպես առողջանության նշանից բացի, «ներքնարութի» ձեռվ գծված մի «դիր» բերելը, «պարոյկին» գծագրական երկու տարրերակ հատկացնելը³⁴, «բաղուղներ» անվան տակ շորս տարրեր նշաններ խմբավորելը, «վանկը»՝ «տակն», իսկ «խուն-

32 «Պատմա-քանախրական հանդես», Երևան, 1968, № 1, էջ 69.

33 Ռ. Արայան, նշվ. աշխ., էջ 90:

34 Ի դեպ, սա բնավ պատահական չէ, քանի որ Եսայի նշեցին ես, իր Քերականի մեկնության մեջ, ոպարոյկին մասին խոսելիս՝ մեկ բերում է նրա հիմնական գծագրածեր և մեկ էլ՝ իրենց վերջին կամ նախավերջին վանկի վրա ոպարոյկը ունեցող անունների օրինակներ առաջարկելիս (Երակլէս, Պաւոս և այլն) տալիս է նույն նշանի մի երկրորդ գծագրածեր, որ նման է «ծանծղարձին» կամ «յարեշտին»: Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 16աւ.

ճը»՝ «շերեփ» անվանելը, առանց կետի «սուրբ» (ի հակադրություն «դիրին») «առ», մեկ կետովք՝ «սուր» և երկու կետովք՝ «լար» կոչելը և այլն, որոնք բոլորն էլ նկատառնելի կետեր են առհասարակ: Ծանոթանանք դրան (գծ. II):

Նախքան առաջ անցնելը հիշեցնենք ընթերցողին «պարույկի» առնշակցությունները «յարեշտի» ու «ձայնդարձի» հետ, ինչպես երեքի ևս կապերը «երկարի» կամ «քաշի» հետ. դիտենք նաև այս կապակցությամբ, որ մեջ բերված հատվածում «պարույկին» կցված նշաններից երկրորդը՝ «ձայնդարձը» կամ «յարեշտն» է հենց, որից բուն «երկարը» տարրերելու համար, վերջինս այսպիս կամ մեկ կետով է դժագրված, ինչպես Գ տախտակի «քաշը»:

Գծ. III

Յ Ե Ր Ա Ժ Ի Հ Մ Տ Փ Ե Կ Ե Ղ Ե Տ Ո Ջ Ի Մ Ա Ս Մ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ե Ր Գ Ե Ն Չ Խ Ա Գ Ա Ն
Ճ Ա Յ Ն Ա Ն Ո Ր Ա ց , և ճ ա ն ա չ ե ն և բ ա ժ ա ն ե ն ի մ ի մ ե ա ն ց զ ա ր ո ւ -
ե ս տ ա ւ ո ր ա ն և զ ա ռ ո գ ա ն ո ւ թ ի ւ ն ք ն , ա յ ս ի ն ք ն ՝ զ շ ե շ տ ն . և
զ օ ր ու թ ն և զ պ ա ր ու կ ն . զ ե ր կ ա ր ն : զ ս ո ւ ղ ն . զ բ ե ն կ ու ր ճ ա յ ն .
զ դ ա յ կ ու ր ճ ա յ ն . և զ ճ ա յ կ ու ր ճ ա յ ն . և զ բ ա ղ ու ղ ն ե ր ն . և
զ տ ա կ ն . և զ ծ ն կ ե ր ն . զ ն ե ր ք ն ա խ ա ղ ն . զ շ ե ր ե փ ն . զ դ ո ւ ր ն .
զ ս ո ւ ր ն . և զ թ ո ւ ր ն . զ լ ա ր ն . զ փ ո ւ շ ն . զ դ ի ր ն . և ա ռ ն .
և զ ա յ և բ ա զ ո ւ մ ի ս ա զ ս , զ ո ր զ ս ո ս ա ի բ ը ր զ ս ե ռ ա ռ ե ա լ
և ի զ ա ն ա զ ա ն տ ե ս ա կ ս ա ր ու թ ի ւ ն և ե ղ ա ն ա կ ե ն , , , 35 :

Դանանք բուն նյութին:

Եթե անցյալում, խաղագրության տարրերի կատարյալ բյուրեղացումից հետո իսկ, հայ երաժիշտներն անհրաժեշտ էին համարում այսպես «ճանաշել և բաժանել» միմյանցից «արուեստաւոր» խաղերը առողջանության նշաններից, ապա ավելի քան հասկանալի պիտի լինի, թե ինչու և ինչպես է, որ XII դարի երկրորդ կեսին, երբ առողջանության նշանների լայնորեն կիրառումը դեռևս ընդհանրացված չէր, բայց երբ արդեն ծաղկում էր մանրուսման դրերի խաղա-

վորման արվեստը, կարող էր ստեղծվել զլխավորապես «արուեստաւոր» խաղերի մի ցուցակ, որպիսին է մեր Գ տախտակը: Ի դեպ, վերջինիս ընդհանրացած խորագիրն էլ, որ բերել ենք վերը, խիստ տարբերվելով թե Ա և թե Բ խաղախմբերի վերնագրերից, նույն միտքն է հուշում, ինչպես ու հաղանցիկ կերպով շոշափել է Ռ. Աթայանը ևս³⁶: Այսպիս, Ա խմբի խաղերն ունեն՝ «Անուանք խաղից շարականաց» խորագիրը. Բ խմբի խաղերը զետեղվում են՝ «Այս է անոն ձեներուն» կամ «Անոն խաղերուն այսոքիկ են» վերնագրի տակ (որտեղ շարականի հատուկ հիշատակություն արգեն չկա, որովհետև սա իրոք ավելի լայն մի ընդորկում ունի առհասարակ): իսկ Գ-ի խորագիրն է՝ ինչպես գիտենք՝ «Անուանք եղանակաց ձայնից երգոց, գիւտից իմաստնոց» (այսինքն, առավելապես «բարդ» խաղեր, կամ մեղեղիական տիպական դարձվածքներ՝ «եղանակներ» նշանակող անուններ): Եվ հատկորոշ է, որ Գ տախտակը այս վերջին տեսակենտից Բ-ից էլ հարուստ է: Ճիշտ է, Գ-ում առկա չեն Բ տախտակի մեջ ներփակված բոլոր «բարդ» խաղերը, բայց նա էլ ունի ուրիշ նշաններ, որոնք բացակայում են Բ-ում: Բայց որում, այդ նշաններից երկուսը՝ «բազմեղանակն» ու «թագաւորատրոպը», լայնորեն կիրառված լինելով խաղգրքերում, գրեթե չեն պատահում շարակնոցներում³⁷: Գ ցուցակն այլ տարբերություններ ևս ունի Ա-ից և Բ-ից, բայց նաև՝ ընդհանրություններ նրանց հետ, որոնք բոլորն էլ առարկ երեսում են երեք ցուցակների ստորև բերվող համեմատական տախտակից (դժ. III տե՛ս էջ 114):

Սրանից պարզ երեսում է (ինչպես նույնը տեսանք նաև լոկ Ա և Բ տախտակները համեմատելիս)³⁸, որ մեր ցուցակներում՝ ա) որոշ նշաններ ունեն նույն կամ գրեթե նույն գծագրածենք, բայց տարբեր անուններ (ասենք՝ «ծընկեներ»=«ծընկիկը»=«ողոմանհակ»). բ) այլ նշաններ, ընդհակառակը, ունեն նույն կամ գրեթե նույն անունը, բայց տարբեր գծագրածենք (օրինակ՝ «հուհայր», «քաշը»). գ) երեք ցուցակները ներփակում են տարբեր թվով նշաններ (Ա=24, Բ=28, Գ=23). դ) և որ երեք ցուցակներից ամեն մեկն էլ ունի խաղեր, որոնք առկա չեն մնացած երկուսի մեջ:

Քննությունը ցույց է տալիս, ուակայն, թե մեր երեք ցուցակների բոլոր նշաններն էլ գործնականում կիրառված են միջնադարյան խաղավորությամբ երգարաններում, և դարձյալ՝ խառն ձեռվալ: Այս հանգամանքը, ահա, մեզ անխուսափելիորեն հանդեցնում է մի եղբակացության. տարբեր վայրերում, տարբեր ժամանակներում և տարբեր նպատակագրումներով ստեղծված սույն երեք ցուցակների տվյալների համագրումից է, որ մենք ստանալու ենք առհասարակ խաղագրության հիմնական նշանների գրեթե ողջ միակցությունը:

36 Ռ. Արայան, նշվ. աշխ., էջ 266:

37 Մեր վերապահումը բացատրվում է Հետելյալով: XVII դարի սկզբում օրինակված, բայց բոլոր տվյալների, Գեորգ Սկեռացու մեջ արդեն ծանոթ գործունեությունից առաջ ընկած մեջ ժամանակաշրջանի վերաբերող նախագաղափարի հետ զեռ ուրած կանոնի երգերի մեջ պատահարար հանդիպեցինք «բազմեղանակն» (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 6101, էջ 157ա–157բ): Եթե այս տեսանկյունով հատուկ նայենք թե միայն մեզ մոտ պահպող շուրջ 350 շարակնոցները, թերեւ հանդիպենք «թագաւորատրոպին» ևս: Բայց միևնույնն է, այս երկու նշաններն էլ բնորոշ չեն Ծարակնոցի խաղագրությանը, և պատահական չեն, որ գրանք ի վերջո դուրս են մնացել Ծարակնոցի հեղինակավոր խմբագրություններից, միաժամանակ առառքեն գործածվելով խաղգրերում:

38 «Պատմա-բանափական հանդես», Երևան, 1968, № 1, էջ 73–74:

96. III.

Ա	Բ	Գ
շեշտ /	շեշտ /	-
փուշ ✓	փուշ ✓	հարուկ ✓
բութ \	դիր \	-
պարոյկ \	բեր \	-
երկար —	քաշ ~	քաշ ~
-	-	յարեշտ ~ /կամ արաշեշտ/
-	-	ձայնդարձ ~
սուզ օ	գլոր օ	-
սուր /	սուր :/	-
թուր)	թուր)	-
եռւնկ)	-	-
թաշտ ~	թաշտ ~	-
ուղրակ ~	ծոցբեր ~	ծոցբեր ~
խունճ ~	խունճ ~	խունճ ~
վերնախաղ ~	վերնախաղ ~	խաղ ~
ներքնախաղ ~	ներքնախաղ ~	դող ~
բենկորճ \	բենկորճայ \	կորճայ \
խոսրովային /	խոսրովային /	քմազարդ /
ժնկներ ՀՀ	ենկիկիթ ՀՀ	ողոմանեակ ՀՀ
հեղորդ ~	էկորժայ ~	խաճեկ ~ /կամ հար/
հակորճ Ջ	հակորժայ Ջ	խաճէ Ջ /կամ հարկորժայ/
խում ~	շում ~	-
փաթութ Ճ	փաթութ ~	գանգոյջ ~
քարքաշ ~ / (~)	քարքաշ ~ / (~)	-
հուճայ Ճ	-	առանձնարոպ Ճ
-	հուճայ Ճ /կամ հայուճայ, հայ- ճայ/	քմատրոպ Ճ
զարկ ✓	զարկ ✓	կուռ զրեհիկ ~
-	լերկ օՃ	-
-	խաղ ~	-
-	բարձրահարեր ~	-
-	վերքաշ ~	-
-	միմնառը ~	-
-	-	ստորադիր ~
-	-	վերադիր ~
-	-	վանկ Ա
-	-	ծանրատրոպ Ճ
-	-	թագատրոպ Ճ
-	-	/կամ թագաւորա- տրոպ/
-	-	քազմեղանակ ՀՀ

Բայց դա էլ հենց մեքենայարար չէ, որ պիտի կատարվի։ Այստեղ հատկապիս նկատի առնվիլիք մի քանի կետեր կան։ Հիմնախաղերի թվաքանակի հարցը, զեթ իր զիխավոր սահմանագծերով, կարծում ենք, լուծված կլինի, վերոբերյալ տախտակից երկու նշան դուրս թողնելով և նրա վրա վեցն ավելացնելով։ Դուրս մնալիք նշաններն են՝ Գ ցուցակի «յարեշտն» ու «ձայնդարձը», որոնք արխաֆիկ ձևեր լինելով, հետագայում իրենց նշանակությամբ տարրալուծվել են մասամբ «երկարի» (կամ «քաշի») և մասամբ էլ «պարոյկի» ու մի քանի այլ խաղերի մեջ (ինչպես տեսանք վերը. թե՛ դա չի նշանակում, որ հիշյալ խաղերը այսուհետեւ պետք է առհասարակ դուրս մնան մեր տեսադաշտից):

Քիչ կանգ առնենք այն նշանների վրա, որոնք հարկ է ավելացնել, ասացինք, մեր համեմատական տախտակի ավշալներին։ Դրանք են՝ հայոց լիզովի տրոհության նշաններից՝ «Ստորակետը», «միջակետն» ու «վերջակետը». Հիմնախաղերի թ խումբը գոյացնող ցուցակներից երկուսի մեջ հանդիպող «հավելյալ» նշաններից երկուսը՝ «տաշտիկ» (կամ «թաշտիկ») ու «կըտիկ» (կամ «վելիկ ճիշտ»՝ «կըտուէ»)³⁹. և մեկ էլ «յէ» կամ հետագայում «կիսափաթութ» անվանված նշանը։

Տրոհության հիշյալ երեք նշանները հիմնախաղերի շարքը դասելու անհրաժեշտության մասին պիտի դատել հետևյալից։ Նախ՝ զրանք առանց այդ էլ ընդգրկված են առողանության զիխավոր նշանների զրությամբ⁴⁰, որն և խաղագրության հատվածներից մեկն է պարզապես⁴¹։ Հետո՝ արդեն հայտնի է, թե նույն այդ կետերը խաղավոր երգարաններում հաճախ ցույց են տալիս մեղեղիի տրոհությունը ևս⁴²: «Ստորակետն» ու «միջակետը» տրոհելով զրական խոսքը, նաև երաժշտական համապատասխան նշանակությունն են ձեռք բերում մանավանդ սազմոսատիպ, ասերգային բնույթի շարականներում և ոտանավոր պարզ երգերում։ Իսկ «վերջակետը» (մասամբ «միջակետն» էլ), բացի իր բուն պաշտոնին համապատասխանող երաժշտական նշանակությունից, «ծանր» տիպի երգերում անշատվելով զրական խոսքից և ներթափանցելով խաղաշրջերի մեջն իսկ, նաև զուտ մեղեղիական մի դեր է կատարում։ Այս կապակցությամբ մեր երաժշտագիտության մեջ կարծիք է հայտնվել, ըստ որի՝ «վերջակետը» քննարկվող դեպքերում ցույց է տալիս մեղեղիի համեմատարար «փոքր մասերը»⁴³: Եվ սա ընդհանուր առմամբ ճիշտ է։ Մի քայլ էլ առաջ զնալով, սակայն, կարող ենք հաստատել, թե դիտողությունները ցույց են տալիս, որ առավել բարդ երգերում (որոնցում խոսքի մեկ վանկը հաճախ զուգորդվում է բաղմաթիվ հնչյունների հետ) «վերջակետը» ողջ մեղեղին բաժանում է լուրատեսակ «տակտերի»։ Դրանք ընդհանրապես լինում են աղատ, այն է՝ իրար անհավասար, ինչպես և պետք էր սպասել միջնադարից։ Բայց հետաքրքրական է, որ ամենեին էլ հաղվագյուտ շնորհած կամ մոտավորապես հավասար «տակտերը» ես, որպիսիք պարզ տեսանելի են, օրինակ, «ուղիցիների» Դեշարքի «փողն» կոչվող հետևյալ ստեղծագործության մեջ (գծ. IV. հմմտ. թե-

³⁹ Անդ, էջ 70.

⁴⁰ Տե՛ս Կոմիտասի „Armenische Kirchenmusik“ ուսումնասիրությունը (Sammelbände der Internationalen Musikgesellschaft, Ա. գիրք, 1899 թ.):

⁴¹ Տե՛ս մեր հոդվածը՝ Առկան վարդապետն ու խաղաղրության արվեստը, «ՀՀմիամին», 1966, № 11—12:

⁴² Ի. Արայան, Խշվ. աշխ., էջ 193—195:

⁴³ Անդ, էջ 198:

կուզ և նույնանման «տակտերը»՝ «վերնախաղ»—«ներքնախաղ»—«բհնկորճ»—«վանկ»+«վերնախաղ» և «ծընկներ» բանաձևով, կամ 5-րդն ու 11-րդը, և կամ՝ 1-ինը, 14-րդը, 17-րդն ու 20-րդը և այլն):

ԳԵ. IV

Պւշկիցին վարչութեան սահմանադրութեան պատճեան աշխատանքները կամ մասնակիութեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Առաջանաւ են այս պատճեան աշխատանքները առաջանաւ են այս պատճեան աշխատանքների մեջ:

Վերջապես պիտի նշել, որ հայոց լեզվի տրոհության այս երեք նշանները հիմնախաղերի շարքը դասելը մեր նորամուծությունը չէ բնագլ: Այդ քայլն արել է դեռևս Գր. Գապասաքալյանը, թեև առանց հատուկ կերպով հիմնավորելու⁴⁴:

«Թաշտիկ» անվան հանդիսում ենք ոչ միայն Բ խմբի խաղերի «Ճ» ցուցակում (որպես հավելյալ անուն): Չեոքի տակ ունենք կազմման սկզբունքով և, Բ և Գ խաղախմբերի ցուցակներից անկախ մի տախտակ ևս՝ «Ճ»: Սա ակնհայտորեն թերի է, ունի սխալների էլ, բայց, այդուհանդերձ, շահեկան է: Այս-

⁴⁴ Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 755 (Մանրուսումն), էջ 242ա:

⁴⁵ «Հանդէս ամսօրեալ», 1895, № 4, էջ 123 (տե՛ս այստեղ «ոտորակ», «միջակ» ու «վերշակ» անուններով բերված նշանները):

տեղ իր հատուկ տեղն ունի «թաշտիկը» (թեև դարձյալ սխալ գծագրաձևով), առեւ է նաև «յէ» կոչվող խաղը: Մանոթանանք դրան էլ, նախապես նշելով նրա առանձնահատկությունները և ուղղելով սխալները: Տախտակս անկախ է, ասացինք, Ա, Բ և Գ խաղախմբերի ցուցակներից: Այսուամենայնիվ, նա որոշ հարաբերություններ ունի այդ խաղախմբերից վերջին երկուսին պատկանող ցուցակների հետ, հատկապես իր ներփակած նշանների գծագրաձևերի առումով: Նրա առանձնահատկությունները մեծ մասամբ վերաբերում են խաղերի անուններին: Նկատառնելի են, այս տեսակետից, «փուշը»՝ «զարկ» և «զարկը»՝ «առուղիր» կոչելը (որ այստեղ պատահական սխալմունքի արդյունք չէ). «վերնախաղը»՝ «խաղըեր», «ներքնախաղը»՝ «աքիվեր» և «էկորճը»՝ «խողող» անվանելը և այլն: Ուշագրություն է գրավում նաև «տակ» և «թուր» անվան տակ գծագրված համապատասխան զուգորդությունը, չնայած անորոշ է մնում, թե ինչ նպատակով է բերված. որպես հնարավոր (և գործնականում իրոք կիրառված) համակցություն, թե՞ որպես հիմնախաղ: Այստեղ նույնպես օգտագործված է օտարութի «շաղար» անվանակոչությունը, որին կցված է «թագատրուպի» նշանը: Տախտակիս ուղղելի սխալները հետեւալներն են: «Շեշտի» նշանը «փուշ» է անվանված, որ բացատրելի վրիպակ է, քանի ինքը «փուշը» այստեղ կրում է «զարկ» անունը (իսկ «զարկն» էլ՝ «առուղիր» կոչումը): Այնուհետև, «ըենկորճ» անունը նախ հատկացված է համապատասխան նշանին, և դարձյալ՝ նրա նույնականացմանը, որ բացարձակ ավելորդ է, որով ներփակված նշանների թիվը 18-ից իշխում է 17-ի: Երկու անգամ է օգտագործված «յէ» անունը ևս. մեկ՝ իրեն համապատասխան նշանի, և մեկ էլ՝ «լերկի» վերաբերությամբ, որ անտեղի է, քանի վերջինս ունի իր հատուկ անունը: Ի դեպ՝ սույն «յէ» անվան մասին: Սա, խստորեն զատելով, անուն չէ, այլ՝ տվյալ խաղի հնչյունավորման դորձնական կերպը թելադրող մի ձայնարկություն: Բայց այս պարագան պետք չէ զարմացնի մեզ, քանի որ ունի իր նախագետները. օրինակ՝ Ա. և Բ տախտակների «հուհայ» (կամ «հայհայ», այլև «հայուհայ») ձայնարկությունները, որոնց համապատասխանող նշանները Գ տախտակում երեսում են իրենց հատուկ գեղեցիկ ու խոսուն անուններով՝ «առանձնատրոպ» և «քմատրոպ» (տե՛ս վերը): Ինչ վերաբերում է «յէ» (կամ «կիսափաթութ») անվան կցված նշանին, առաջ խաղավոր երգարաններում հանդիպում ենք դրան ևս, ու նույնիսկ՝ «լերկը» հիշեցնող մի ձևափոխությամբ էլ, որից զժվար չէ հասկանալ. թե «յէի» պարզ ձևը բանեցված է եղել որպես հիմնախաղ⁴⁶: Վերջապես մեր «Կ» տախտակում սխալ է նաև «թաշտիկի» գծագրաձևը, որ հիշեցնում է հարիստնական դիրք ընդունած «խունճի» կամ մի փոքրիկ «էկորճի» նշանը: Մինչդեռ «թաշտիկը» իր գծագրաձևով «թաշտի» փոքրացումն է հենց (ինչպես հուշում է անունն իսկ), որն անգամ բնափիր ձեռագրերում հեշտությամբ կարող էր խառնվել բուն «թաշտի» այլագրություններին ու թերագրություններին, և այդուհետ էլ եղել է զժբախտաբար: Սակայն՝ «թաշտի» մետրական արժեքի մասին հայտնի տվյալները՝ մի կողմից, և իրենց խաղերի շարքում «թաշտիկը» ունեցող երգերի կառուցվածքի մասին մեր գիտելիքները՝ մյուս կողմից, թույլ են տալիս տարրերելու «թաշտիկը» «թաշտից» և, հետեւար, հաստատելու «թաշտիկի» ինքնուրուցին գոյությունը: Խոսելով «թաշտի» մետրական արժեքի մասին,

գետես Ե. Տնտեսյանը այն դասել է «երկար վանկ» նշանակող խաղերի շարքը⁴⁷: Եվ դա խկույն երեսում է նույնիսկ «միջակ» կամ «շափավոր» մի քանի քաջ հայտնի վառ ստեղծագործությունների խաղագրության և դրանց՝ ավանդաբար մեզ հասած մեղեղիների համեմատությունից էլ (Հոսուելով «ծանր» ու «ստեղի» երգերի մասին), ինչպիսիք են՝ Հոփիսիմյանց «Անսկիզրն բանն Աստուածը», Դոնդյանց «Անճառելի բանդ Աստուածը», Վարդանանց «Նորահրաշ պսակաւորը» և այլն: Բայց կան շատ երգեր են, որոնցում առաջին հայացքից «թաշտի» տպավորությունն ստեղծող նշանը մետրական մեկ միավորի արժեքից ավելին չի կարող ցույց տալ, ինչպես դա նկատել է Ռ. Աթայանն էլ⁴⁸, և սրանց մեջ է, որ պիտի տեսնել «թաշտիկը»: Վերցնենք, օրինակ, Ներսես Շնորհալու «Նորաստեղծեալը»: Սրա գրական խոսքը խստորեն շափավորված մի պարզ ստանավոր է: Քառավանկ երկու անդամներ (կամ ոտքեր) առաջ են բերում մի տող երկու տողը՝ իմաստային մի ամբողջություն. և շորս այսպիսի երկտողեր՝ մի տոն: Նույն կառուցվածքն ունի երդի հայտնի մեղեղին ևս: Գրական յուրաքանչյուր տողին համապատասխանում է երաժշտական մի «տող». այսպիսի երկու «տողերը» առաջ են բերում երաժշտական մի նախադասություն, որ առարտվամ է կիսակաղանուվ, իսկ վերջին նախադասությունը՝ վերջնակաղանուվ: Դարձյալ՝ երդի մեղեղիի (սրա երկու տարրերակների էլ) քննությունը ցույց է տալիս, որ այն ունի ոչ միայն պարզ կառուցվածք, այլև մեղեղիական ոլարդ, լակոնական գիծ ու պարզ կշռույթ (սիթմ), որում «երկար վանկը» հանդիպում է միայն վերջնակաղանում: Եվ սույն պատկերը ևս մենք տեսնում ենք երդի խաղագրության մեջ: Այն նոսր է ու իրացված՝ մետրական մեկ միավորի արժեքով ընդամենը մի քանի նշանի օգնությամբ, ինչպիսիք են՝ «բութը», «փուշը», «ծունկը» և «խունճը». ամբողջ տան լոկ վերջին երկու վանկերի վրա են երեսում «երկար վանկ» նշանակող «բենկորճը», «վերնախաղն» ու «երկարը»⁴⁹: Ահա այսպիսի կոնտեքստում է, որ երդի յուրաքանչյուր երկտողի սկզբում «սուղի» հետ միասին հանդիս է զալիս նաև «թաշտը» հիշեցնող խաղը, որը, սակայն, «թաշտիկն» է իրականում: Այժմ տեղն է նշելու, որ զետես հարց է, թե մեկ կետավոր «թաշտը», որ զուն ուրեք հանդիպում է հին ընտիր պրշագրերում⁵⁰ և, ինչպես տեսանք, նաև Բ խմբի հինգ խաղացուցակներում⁵¹, արդյո՞ք հենց «թաշտը» «թաշտիկից» տարրերիլու ձգառումից չի առաջացել: Դա կպարզվի հետագայում: Այս ուղղումներից հետո նախ բերենք, վերջապես, մեր «Ա» կոչած տախտակը⁵² ևս (գծ. V տե՛ս էլ 119):

Հիմնախաղերի թվաքանակի խնդրի կապակցությամբ մեզ մնաց խոսել «կրտուէի» մասին: Ասել ենք, որ այն հանդիպում է (բացի բուն խաղավոր երգարաններից) Բ խմբի խաղերի: «Է» ցուցակում, որպես հավելված նշան, իրե-

47 Ե. Տնտեսյան, Տեսութիւն Շարականի երգոց խաղերուն, «Ժամանակ», 1864 (Հազելված № 45-ի):

48 Ռ. Արայան, նշվ. աշխ., էլ 233—239:

49 Հմմտ. Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 1576, էլ 273ա. և երդը ձայնագրեալը յամագրոց, Վաղարշապատ, 1877, էլ 318 ու 320:

50 Տե՛ս նույն № 1576 գրչագիրը, էլ 51ր, 94ր, 258ա, 349ը և այլուր:

51 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էլ 71—72:

52 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 8976, էլ 37ը (տախտակիս վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Լայաֆարյանը, որի համար հայտնում ենք նրան մեր շնորհակալությունը):

նից ներկայացնելով «բենկորճի», «ներքնախաղի» ու «ծոցքերի» համակցությունը⁵³: Բայց, դատելով նրա անունից, սա ևս (ինչպես «բարձրահարեր», «վերքաշն» ու «միմնաւորը»), այն զուգորդություններից է, որոնք իրենց բաղկացուցիչների պարզ զումարը չեն: Խաղիս անունը՝ «կրտուէ», հրամայական եղանակն է «կտուեմ» բայի (և այս սկզբունքով կազմված ուրիշ անուններ էլ ունենք, ինչպես օրինակ՝ «յետ ձգէ»), որ նշանակում է՝ «կրկտելով սրբել հետրել զաւելորդ ոստո տնկոց, յատանել»⁵⁴, և որի հրամայականը մասնավորապես երգչին ուրիշ բան չէր կարող հուշել, քան եթե խաղերի տվյալ համակցությունը վերաբռտագրել, նրա բաղկացուցիչների պարզ զումարի համեմատությամբ՝ ինչ-ինչ տարրերից սրբված, այն է համառոտված, կրծատված ձևով: Եթե եթե սա մի մասնավոր դեպք լիներ, մեթոդական «ըստ տեղի» մի ցուցմունք, անհայտ զրիշը հաղիվ թե իր զաղափարած խաղացուցակին ավելացներ բննաբեկվող անունը:

ԳՅ. V

ԴԻՐ. զարկ. ✓ առուղիր. ✓ շեշտ. խաղեր. ձայղործա.
 ՀԵՐԿ. ծոցքեր. քազ. Խոզող. Բուր. Հաղար. յէ.
 Մաշտիկ. բենղործա. տակեթուր. աքիվեր:

Այսպիսով ստանում ենք 42 հիմնախաղ: Սրանց դասակարգման դորձում չենք կարող զեկավարվել մեր Ա, Բ և Գ տախտակներից լոկ մեկի հիմքում ընկած սկզբունքով: Ընդհակառակը՝ օգտակար և նպատակասլաց է, այս հարցում որսալ ու առավել ես զարդացնել երեք տախտակներից յուրաքանչյուրի մեջ առկա բանական (ուսցիսնալ) հատիկները: Ասենք՝ սկզբից առողանության նշանները բերելու միտքը Ա տախտակում: Խաղային համակցություններ ներկայացնող «բարձրահարեր», «վերքաշն» ու «միմնավորը» մի տեղ խմբավորելու փոքը Բ ցուցակում: «առանձնատրուպ»—«բմատրուպ»—«ծանրատրուպ»—«թագաւորուպ» յուրահատուկ «ընտանիքի» զաղափարը Գ-ում և այլն:

Այնուհետև, այն բոլոր դեպքերում, երբ միևնույն խաղանշանին վերքարող անունները մեկից ավելի են, զրանք ներկայացնելու ենք անխտիր, օգտվելով և մեր երեք հիմնական տախտակներից (Ա, Բ, Գ), և «Х» ցուցակից, և վերևում № 20 գրշապից բերված հատվածի տվյալներից, դտնելով, որ զրանք հին են (զալիս են XII—XVII դարերից) ու շահեկան՝ այլական զիտարկումներ կատարելու տեսակետից: Չորս նշաններ կան, որոնց երկրորդ կամ երրորդ անունները միաժամանակ տարրեր խաղերի, եթե կարելի է ասել՝ «հիմնական» անուններն են, զրանք տալու ենք փակադերի մեջ, հատուկ նշելով աղբյուրը (առաջի ըստ Ա. ցուցակի, կամ ըստ Գ-ի և այլն): Երկու անդամ էլ, նորեն փա-

53 «Պատմա-բանատիրական Հանդիս», 1968, № 1, էջ 70:

54 Նոր բառզիրը Հայկագեան լեզուի, Հատ. Ա:

կազմերի մեջ, բերելու ենք տվյալ նշանի նաև հետագա դարերում ստեղծված անունը, խաղերի ընդհանուր դասակարգության մեջ նրա տեղն ավելի հասկանալի դարձնելու մտահոգությամբ: Իսկ երբ միևնույն նշանի գծագրաձևն է տարրեր մեր երեք ցուցակներից մեկում, այն տալիս ենք որպես ընդհանրացած տարրերակ (որ հիշեցնում ենք, թե որիշ բան է, քան որևէ մեկ խաղի այլագրությունը):

Ենելով վերը շարադրվածից, ստորև բերենք միջնադարյան հայ խաղապահության հիմնական նշանների տախտակը (գծ. VI տե՛ս էջ 121):

Սա առհասարակ մինչև այժմ առաջարկված խաղային տախտակներից առավել ճշգրիտն ու ամբողջականն է թվում մեզ: Նրա ներփակած նշանները ընդորկում են հայկական խաղավոր բոլոր տիպի երգարանների հիմնախաղինքը: Այստեղ նշանների գծագրաձևները հստակված են ու բերված՝ իրենց ընդհանրացած տարրերակներով հանգերձ: Եվ նույն այդ նշանների՝ XVIII—XIX դարերում արմատացած հետահնար անվանակոչությունների փոխարին (վերջիններիս մեր արդի երաժշտագիտությունը դիմել է լոկ «Հնարավոր խառնաշփոթից խուսափելու համար»)⁵⁵, հավաքված ու համադրված են դրանց հին, ավելի ճիշտ ու հարազատ և շատ գեղքերում ավելի խոսուն անունները⁵⁶, որոնց ստուգարանության մեջ խորանալը, երրեմն կարող է անգամ վճռական դնը խաղալ տվյալ խաղի գործնականում ունեցած նշանակությունն ըմբռնելու խնդրում:

Եվ սակայն, մենք հեռու ենք սույն տախտակը լիակատար ու վերջնականապես ճշգրտված համարելու մտքից: Ընդհակառակը, այժմ իսկ կարող ենք տանը, որ հետագայում, ամեն մի խաղանշանով առանձին զբաղվելուց և խաղերի դրությունը բացահայտելուց հետո տախտակը վերջնականապես կխմբագրվի, կլրացվի և կպարզաբանվին մի շարք նշանների՝ որպես հիմնաձևների գործածության հանգամանքները, ինչպես՝ կետերով զրության պարագան: Մինչդեռ ներկայումս, ասենք, վերջին կոնկրետ հարցի տեսակետից, զրությունը հետեւյալն է: Արդեն նշել ենք, և տախտակից էլ պարզ երևում է, որ նշաններ կան, որոնց կետերով ձևափոխված գծագրաձևներն ընդունվել են որպես հիմնաձևներ: Դա տեղի է ունեցել ժամանակի ընթացքում, որոշ օրինաշափության հիման վրա: Վերցնենք, օրինակ, «ձակորճը»: Ասել ենք⁵⁷, որ նրա մեկ կետում ձևափոխված նշանը որպես հիմնաձև է ընդունվել նույնիսկ Ա խմբի ցուցակներում, որոնք մյուսներից ավելի հին պետք է լինեն: Բայց սա դեռ չի նշանակում, որ «ձակորճ» կետավոր է գծագրված եղել սկզբից ենթ: Վերոհիշյալ XII դարին վերաբերող խաղավոր հնագույն շարակնոցում «ձակորճը» զրեթե միշտ գործածված է առանց կետի⁵⁸, որով նրա կետավոր գծագրին խելույն ընկարվում է որպես ձևափոխված նշան: XIII—XIV դարերի ընտիր դրշագրերում, սակայն, ճիշտ հակառակն է, և սրանցում առանց կետի «ձակորճ» թողնում է պատահական թերագրության տպավորություն, որից այժմ միայն մեկ եղբակացության կարող ենք զալ. բայց եղած տվյալների, ժամանակին կնախավոր «ձակորճին» համապատասխանող մեղեղիական դարձվածքն ինքը

55 Ա. Արայան, նշվ. աշխ., էջ 178:

56 Գործ, որի անհրաժեշտությունը մատնացուց էր անում դեռևս Տրդատ և Պալլանը («Հանդիսամասորեալյ», 1895, № 4, էջ 123):

57 «Պատմա-բանասիրական հանդիս», 1968, № 1, էջ 72:

58 Մաշտոցյան Մատենադարան ձեռ, № 9838:

96. VI

ստորակետ	
Միջակետ	
Վերջակետ	
Սուշ, գլոր	
Երկար, քաշ	~~~
Հեշտ	/^
Բութ, դիր	\
Ապրոյէցքեր	~
Ուղրակցոցքեր	~
Գուշ, հարուկ/ըստ Համբարձուկի	/ / :/ ✓
Սուր, լարն	/ / :)
Բռւը	:)
Խուճն, շերեփ	~
Ճռւկ	~
Ճնկներ, ծընկիւք, ողոմանեակ	~~
Բաշտիկ	
Բաշտ	
Ըարկ, կոռա զրեհիկ, առուղիր	✓
Խուժ, դում	~~
Խոսրովային, քմաջարդ	~~
Ստորադիր	
Վերադիր, յետ հըե)
Խաղ	
Վերնախող, խաղբեր/ըստ Թամբիխողի	~~~
Ներքնախող, աքիվեր, դող	~~~
Քարքաշ	~~~
Շենկորչ, քենկորճայ, կորճայ	ضـ
Էկորչ, էկորճայ, խաթբեն, հար, խոզող	ضـ
Հակորչ, հակորճայ, խածլէ, հարկորճայ	ضـ
Վանց, տանց/հետագայում՝ մենկորչ	ضـ
Վաթութ, հանգոյց	ضـ
Հէ/հետագայում՝ կիսախթութիւն	ضـ
Հերէ	ضـ
առանձնաօրույ/ըստ Ամամինուայի	ضـ
քմայրուկ/ըստ Ալուս-ի ֆաթութի, ըստ Բամ-ի հուճայի	ضـ
ծանրաօրուկ	ضـ
Թագասարուկ, Բագասարատրուկ	ضـ
բարերահարնիր	ضـ
Վերջաշ	ضـ
Միջնակոր	ضـ
կըտուի	ضـ
բաղմեղանեակ	~~

Հենց ձեռք բերելով հիմնական դարձվածքի նշանակություն, կետավոր «ձակորձի» նշանին ևս հաղորդել է հիմնաձեկի զորությունը։ Համանման մի օրինակ է տալիս մեզ նաև «առանձնատրոպիկ» և «ժանրատրոպիկ» համեմատությունը։ Չփորձված աշխատամ իսկույն նկատում է, որ հիշյալ խաղանշաններից երկրորդը, առաջինի՝ մեկ կետով ձևափոխված գծազիրն ունի պարզապես (տե՛ս վերը)։ Միայն թե, այս դեպքում՝ առանձին անուններով, որպես առանձին հիմնաձեկի գործածվել են և՛ մեկը և՛ մյուսը։ Դժբախտաբար կետերի կիրառման ոչ բոլոր դեպքերն են, որ երեան են բերում նման հետեւղականություն⁵⁹, որով խնդիրն իր ամբողջության մեջ դեռևս մնում է քննելի։

Այս բոլորով հանդերձ, վերը բերված տախտակն ունի աշխատանքային կարենոր նշանակություն։ Խնդիրը նրանումն է, որ երաժշտախաղերի զրության բացահայտումն էլ, իր հերթին, պահանջում է նախօրոք ձեռքի տակ ունենալ հիմնական նշանների ըստ կարելվույն լրիվ և սառուց ցուցակը, և այս իմաստով բերված տախտակը նախնական անհրաժեշտ պատվանդան է ստեղծում աշխատանքային հաջորդ փուլին անցնելու, որ ի վերջո հանգելու է, տախտակում ներփակված խաղերից յուրաքանչյուրով առանձին զբաղվելով, նրա նշանակությունը վերականգնելուն։

Ի դեպ, տախտակիս վրա հարեանցի ակնարկն իսկ հուշում է, թե այս գործում շի կարող լինել ուրիշ «կարճագույն» մի ճանապարհ, քանի որ միջնադարից մեզ չեն հասել խաղագրության արվեստի տեսությանը նվիրված մասնավոր ձեռնարկները (ինչպիսիք են, ասենք, բյուզանդական ուսուցչութեան), և որ ինքը՝ խաղագրությունը միջնադարում (և ոչ միայն մեզ մոտ), որպես յուրատեսակ ձայնագրություն, տարանջատված շի եղել հին ու նոր եղանակների (ավելի լայն՝ մոնողիաների) և դրանց տեսակների կաղմության մասին դիտությունից, ինչպես հասկացնել է տալիս ե. Տնտեսյանն էլ⁶⁰։

Մի ճաշակ տալու համար ընթերցողին այն մասին, թե ինչպես էր գործում հատկապես միջնադարյան հայ երաժիշտ-խաղադետի միտքը՝ վերոբերյալ նշանները յուրացնելիս, զրանք ըստ էության հղանալիս, համապատասխան զծաղրաձեկեր ստեղծելիս, և, հետեւաբար, նաև կիրառելիս, հակիրճ նշենք այդ նշանների հարաբերակցություններում նշմարվող մի քանի ընդհանուր կարգի սկզբունքները (որոնք անկախ են վերը ցույց տրված «առողջանության» ու «արվեստավոր» խաղերի բաժանման սկզբունքից)։ 1) Հակագրության և հակադրությունների համադրման սկզբունքը (մի տեսակ՝ թեղ, անտիթեղ, սինթեղ)։ Մրա դասական օրինակը տալիս են նախ՝ առողջանության «շեշտ»—«ըութ»—«պարոյկ» խաղերը, որոնցից առաջին երկուսը հակադրություններ են,

59 Այս և նման մի-երես այլ հանգամանքներ գել առ այժմ մեզ կանգնեցնում են հետեւյալ մտարման առաջ։ Խաղանիշների յուրատիսը զրությունը անվերը կատարելազործության ճանապարհի վրա հասա՞վ արդյոք իր բոլոր մանրամանքների լիակատար մշակվածությունը, թե՞ ոչ։ Համապատասխան երկու վարկածներն էլ հավանական են թվում, որով հասկանալի է, թե զրանցից մենքը կամ մյուսը դնում հատուկ պիտի հիմնավորեն։ Բայց այս փաստը ընազ չվերաբերելով խաղագրության արվեստի էության զրական ու բացառական կողմերի հարցին, և ոչ մի լավով շկանխորոշելով խաղանիշների զրության վերծանման հնարավորությունների խնդիրը (ինչպես կարելի է մտածել առաջին հայացքից), պարզապես հետազոտողից պահանջում է ունենալ ելուետույին առավել ճկուն ու տարողունակ դիբքեր։

60 Նկարագիր երգոց Հայաստանեալցո եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, լ. 88.

Համադրված երրորդում⁶¹: Բայց և նույն մտածելակերպն է, որ դրանորվում է նաև «վերնախաղ»—«ներքնախաղ»—«քարքաշ»՝ արդեն «արվեստավոր» խաղերի առնչակցություններում: 2) Կրկնապատկման սկզբունքը: Օրինակ՝ «ծունկ»—«ծոնկներ», որը բացատրում է Խաչատուր Էրզրումեցին, ասելով. «նա ծոնկներ անուանակոչի... վասն դի զայն կրկնապատկէ», որ ծունկ յարանուանեցեալ է»⁶²; 3) Որևէ հիմնախաղի նշանակության (կամ նրա գլխավոր մեկ հատկանիշի) խորացման սկզբունքը: Ասենք՝ «պարույկի» ոլորակայնության խորացումը «ոլորակում», ինչպես դիտել տվեց Իգնատիոս Կյուրեղյանը⁶³; 4) Զայնեղանակային կամ առհասարակ երաժշտակատարութական մեկ արձատական իրողություն բողոքեցնելու սկզբունքը (տե՛ս վերը «կորճաների» այլ «տրոպների» ընտանիքները); 5) Տարբեր նշանների հարակցման կամ դուդորման սկզբունքը և այլն:

Հետեւաբար, այս թնջուկի՝ մտքի պրկումով ու հանկարծահաս լուսավորությամբ գտնված մի ծայրը միայն քաշելով չէ, որ խստակվի պիտի նա մեքենայորեն: Այստեղ սկզբից ևեթ հարկ է դիրքավորվել՝ երկարատես, մանրազնին տշխատանքներ կատարելու նպատակադրությամբ: Աշխատանքներ, որոնք ենթադրում են՝ խաղանշաններից յուրաքանչյուրով առանձին զրադվել, զրանցից ամեն մեկը քննելով իր անվան ստուգաբանության, նրա նշանակությանը վերաբերող՝ մեր միջնադարյան հեղինակների ասույթների համեմատության, շայ խաղադիտության կուտակած թեև համեստ, բայց ուսանելի փորձի, առհասարակ երաժշտական միջազգային հարուստ զրականության, և մանավանդ, մի կողմից՝ խաղավոր ընտիր երգարանների, և մյուս կողմից՝ նույն երգարանների ավելի ուշ իրագործված ձայնագրությունների համակողմանի ուսումնասիրության լույսի տակ:

Н. К. ТАГМИЗЯН

СОВОКУПНОСТЬ ОСНОВНЫХ ХАЗОВ

Р е з ю м е

Исследование армянских средневековых хазовых (невменных) рукописей предполагает определение основных хазов и их отличие от всякого рода вспомогательных, измененных и производных знаков. При решении этой задачи большую помощь оказывает целый ряд рукописных отрывков, в которых предлагаются различные таблицы основных хазов.

61 Ինչպես ուս պարզաբանում են նաև զրեթե բոլոր հայ քերականները: Տե՛ս թեկուղ և նուայի Նշեցի, Մեկնութիւն Քերականին, Մաշտոցյան Մատենագարան, ձեռ. № 2373, էջ 136թ («զի որպես շեշտն ի վեց հանելով սրբ, նոյնապէս և բութն՝ ի խոնարհ իշուցանելով հարթէ. և երկուունց ծայրիցն՝ ի շեշտէ. և ի բթէ բազկանայ պարույին, որպէս ի սեպյն և ի սպիտակէն՝ գոշն»):

62 Տե՛ս մեր Հոգվածը՝ Խաչատուր Էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսարան, «Երաբեր Հաստակական դիտությունների», 1966, № 11, էջ 72:

63 Լուսաբանութիւն խաղից և երգեցողութեան շարականաց, «Բազմավէլլա», 1904, № 3, էջ 128:

Систематизация и сравнение этих таблиц показывают, что они, по количеству охватываемых хазов, а также по наименованиям и графическим начертаниям некоторых из знаков, в общем подразделяются на три группы. Это фактически три таблицы, созданные в различное время, на различных этапах развития искусства хазового письма и в разных местах. Все те знаки, которые заключены в этих таблицах, в смешанном виде применены в рукописях.

Следовательно, скомпонавав данные рассматриваемых таблиц, мы получим совокупность почти всех, употреблявшихся некогда, основных хазов.

Предлагаемая таблица основных хазов имеет важное значение в качестве непосредственного руководства для проведения дальнейших работ.

N. K. TAHMIZIAN

UN TABLEAU D'ENSEMBLE DES PRINCIPAUX „KHAZES“

L'étude des manuscrits musicaux arméniens, notés en khazes (neumes), impliquait nécessairement la différenciation des signes principaux par rapport aux signes secondaires, modifiés ou dérivés de toutes sortes. Des fragments entiers de manuscrits en assez grand nombre renfermant diverses tables des principaux khazes sont très précieux à cet égard.

Soumises à une systématisation et comparées d'après le nombre respectif de khazes, le nom et le graphisme de certains signes, ces tables ont donné lieu à trois groupes généraux qui ne sont effectivement que trois tables créées en des régions et à des époques différentes et indiquant par là-même les étapes successives du développement de la notation neumatique arménienne. Les signes réunis dans ces tables sont employés dans les manuscrits sans distinction.

Ces investigations permettent d'envisager l'ensemble de presque tous les khazes principaux ayant jamais été utilisés. La table qui leur est consacrée a une importance de premier ordre pour les recherches ultérieures en ce domaine.